

ՕՐԸԳԻՐ

ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԻՐ

(ԹԻ- 775)

Հեթանոսութեան ժամանակ մարդկային վարքն ու բարքը, նա մանաւանդ ընտանեկան կեանքը, որ մարդկութեան որրանն է, ըստ ամենայնի ապականուած էր և իւր մեծ նշանակութիւնն խաբսւ կորուսած. որով համայն աշխարհ անբարոյականութեան մէջ կը լողար. անմեղութիւնն ու առաքինութիւնը գողցես խոյս տուած էին աշխարհէ։ Ամեն ոճրագործութիւն, ամեն չարութիւն ու անբարոյականութիւն յայտնի համարձակ կը գործուէր ամեն ուրէք։ Ամուսնական մեծ խորհուրդը իւր սուրբ նշանակութիւնն կորուսած էր, լոկ դաշնադրութիւն մի դարձած և մարդոյ տնտանական ցանկութիւնն յագեցնելու միակ միջոց եղած էր, որով և բազմակնութիւնն յառաջ բերած։ Սարգըն իւր վայրագ կրիցն ու մոլութեանց վատ սարուկն էր դարձած, և կինն մարդոյն անարգ գերին էր։ Ինդհանուր մարդկութիւնն ՚ի զուր յուսահատ կը հեծէր իւր վերայ ծանրացող բռնութեան և մարդավիշ գերութեան անագորոյն լծոյն ներքեւ և ընդհատ խլտուամերով յուժակտա կը վատնէր ճիգն ու ջանքը զանոնք իւր վերայէն թթափելու համար։ Սարգկութիւնն համայն անբաւական էր այդմ։

Սակայն եկաւ Քրիստոնէութիւնըն, իւր ազատ ու փրկարար սկզբունքներով բռնութեան անուրն ու շղթայն խորտակեց, տգիտութեան մահաբեր լուծը ջախջախեց և նոցա բովանդակ զորութիւնն ջրատելով՝ նոցա

բամբնելի թագաւորութիւնն ջնջեց և ազատութեան երկնային թագաւորութեան դահլը մարդկային օրով վրայ հաստ ստեց։ Սարգն իւր ստորին վիճակէն բարձրացնելու համար ընտանեկան ապականեալ կեանքը, (որ պէտք էր մարդկային ընկերական առաքինութեանց ապարէզն ու միանգամայն բրիտանէական բարեպաշտութեան վառարանն ու ջերմարանն լինէր), ամուսնական մեծ խորհրդով սրբեց ու մաքրեց, վերստին իւր նախկին մեծ նշանակութիւնը տուաւ, և որչափ որ եղածուած էր հեթանոսութեան ժամանակ, ընդհակառակը նոյնչափ մեծութեան և սրբութեան հասոյց իւր ջերմորհիւ։ Իսկ ամուսնութիւնն կամ որ նոյն է կուսութիւնն կամ կուսակիւննութիւնն յարգեց ու մեծարեց և մարդոյ ազատ կամեց թողուց ամուսնանալ կամ կոյս մնալ։ Այսպէս մի անուրանալի ապացոյց է, որ բրիտանէական կրօնը չը բռնաբարեր երբեք բրիտանէի մը ազատութիւնն ու պատասխանատուութիւնը, այլ ընդհակառակը դայն աւելի եւս կը նուիրագործէ և կը բարձրացնէ։ Այլ խնայէ՞ս կարող է մարդոյ սրտին ու խղճին վերայ բռնանալ այսպիսի կրօն մը, որ խնքին ազատութիւն է, և իւր հիմն ու հաստարանը ճշմարիտ ազատութեան հիման վերայ բարձրացած։

Քրիստոնէութիւնն կը սրահանջէ, որ մարդն ազատ լինի, այսինքն անմեղ և արդար, վասն զի ճշմարիտ ազատութիւնը միմիայն անմեղութեան եւ արդարութեան մէջ կարող եմք գտնել։ Այբ սնձ մի մոլի է, երբ իւր կրից տէրը չէ, կը նշանակէ որ նա ազատ չէ. այլ իւր կրիցն ու մոլութեանց անարգ գերին, որոնք բռնաւորներէն աւելի կը վնասեն մարդոյն. վասն զի բռնաւոր մի մարդոյ մարմնոյն վերայ

միայն կարող է իշխել և զայն միայն սպանանել ու կորուսանել . բայց կիրքերն ու մոլութիւնները մարդոյ մարմնոյն և միանգամայն հոգւոյն վերայ կը տիրեն , զսնոնք անխնայ կըսպանանեն և յուխտենապէս կը կորուսանեն :

Քրիստոնէութիւնն երբէք ստորկութիւն չը պահանջեր մեզմէ , այլ կը փափայրի որ մեր առ Վտուած ունեցած հաւատն իսկ ներքին համոզմամբ և ազատ կամու լինի : Քրիստոնէութիւնը զգուանօք կը մերժէ անարդ գերութիւնը , և կռապաշտական ստրուկ հաւատը լուսաւոր հաւատոյ հակադատներ կը համարի :

Քրիստոնէական կրօնն որպէս Վտուածային կրօն , ընդունած և հաստատած լինելով մարդոյ անձնիշխանութիւնն , ազատութիւնն ու պատասխանատուութիւնը , թոյլ տուած է զմարդ , որ իւր բովանդակ գործոց մէջ ըստ իւր ազատ կամոց փարի , և իւր ազատ կամքը համաձայն ատուածային կամաց , ինչպէս ամեն բանի մէջ նոյնպէս և ամուսնութեան : Այս չը բռնանար երբէք մարդոյ վերայ , որ անպատճառ ամուսնանայ կամ ամուսնութիւն ուխտէ . այլ նորա ազատ կամոց թողած է , որ ըստ հաճոյս մին կամ միւսն ընտրէ , և երկուքն եւս արգարութիւն համարած է . « Եթէ ամուսնանայցես , կ'առն Սրբազան առաքեալն Պօղոս , ո՛չ մեղար , և եթէ ամուսնանայցէ կոյսն՝ ո՛չ մեղաւ . . . » Իսկ որ հաստատեալ է 'ի սրտի իւրում , և վտանգ ինչ ո՛չ իցէ նմա , իշխանութիւնն 'ի վերայ կամաց իւրոց և զայն ընտրեաց 'ի սրտի իւրում՝ պահել զկոյսն իւր , բարւոք առնէ , և որ ամուսնացուցանէ զկոյսն իւր՝ բարւոք առնէ , և որ ո՛չն ամուսնացուցանէ՝ լաւ ևս առնէ :

Ուստի քրիստոնէոյ մի ազատ է , երբ կամի կտրող է ամուսնութեան

սուրբ պատկն ընդունիլ , և եթէ չը կու մի կտրող է կոյս մնալ . իւր ամուսնութիւնն ու ամուսնութիւնը կամ կուսութիւնը բացարձակապէս իւր ազատ կամքէն կախեալ է . բայց այսու պայմանաւ միայն , որ եթէ ամուսնանայ , պէտք է իւր ամուսնութեան կապը անլուծանելի և յաւիտենական կապ լինի . հարկ է որ այդ մեծ խորհուրդը , որ Քրիստոսի առ Լկեղեցին ունեցած սիրոյն նշանակն է , բարոյական ազատութեամբ , սիրով և հաւանութեամբ ընդունի և ո՛չ թէ յակամայից կամ նիւթական շահէ և կամ մի այլ պատճառէ ստիպեալ , որ անմասն են բարոյական կապակցութեան : Իսկ եթէ ամուսնութիւն կամ կուսութիւն ուխտէ , հարկ է որ իւր սիրտն ու անձը անարատ կուսութեան մէջ պահպանէ և իւր ուխտն հաստատ պահէ :

Բայց կտրելի է որ ամուսնացեալ մի հաստատուէ մնայ իւր որոշման մէջ և սրբութեամբ ապրի . և ընդհակառակն կոյս մի իւր ընտրութեան դէմ մեղանէ , չար ճանապարհաց մէջ գտնուի և խառնակեաց լինի . կամ փոխադարձաբար կոյս մի սրտի սրբութեամբ ապրի և ամուսնացեալ մի անսուրբ և ուխտադրուժ լինի . և կամ կտրելի է որ երկուքն եւս մի և նոյն ժամանակի մէջ թէ սրբակեաց և ուխտապահ լինին , և թէ անսուրբ և ուխտադրուժ : Սակայն առկէ չը հետեւիր որ անպատճառ ամուսնութիւնն բարոյականութիւն կ'ենթադրէ և կուսութիւնն կամ կուսակրօնութիւնն անբարոյականութիւն . կամ հակադարձաբար կուսակրօնութիւնն՝ բարոյականութիւն և ամուսնութիւնն՝ անբարոյականութիւն . ըստ որում մարդոյ մի ամուսնութիւնը՝ իւր բարոյական լինելուն էական յատկանիշն

կամ պայմանը չէ, ինչպէս նաեւ նորա ամուսնութիւնը իւր անբարոյականութեան իսկական պատճառն կամ հանգամանքը չէ :

Մարդոյ մը տառաքինի կամ մոլի լինելը ոչ թէ իւր ամուսնացեալ կամ ոչ ամուսնացեալ լինելէն կախումն ունի, այլ իւր սրտէն. եթէ սիրտն բարի է, ապա և մարդն բարի և հետեւաբար տառաքինի. իսկ եթէ սիրտը չար է, ապա և մարդն չար է և մեղաւոր. վստն զի մարդոյ մը բարոյականութեան կամ անբարոյականութեան իսկական պատճառը և բուն աղբերակը սիրտն է. անտի կը բղիթին բարութեան, անձնութեան, ճշմարիտ խոնարհութեան, հեղուութեան, աստուածապաշտեան, եղբայրսիրութեան, հաւասարութեան, ազատութեան, մարդասիրութեան, արդարասիրութեան և ճշմարտասիրութեան ամենաբարի և անհամեմատ գեղեցիկ զգացումներն. անտի կը բղիթին նմանապէս բղջիխոհութեան, ցանկութեան, պոռնկութեան, ամբարհուածութեան, եռականութեան, մարդատեցութեան, անձնապանութեան, ստախոսութեան, արբեցութեան և ամեն կորստաբեր կրից բովանդակութիւնը : Աւրեմն մարդոյ բարոյական կամ անբարոյական լինելը գիտնալու համար պէտք է նորա սրտի վիճակն ու դրութիւնը հետազոտել իւր արտագրութեամբ, և ոչ թէ նորա ամուսնացեալ կամ ամուսնի լինելը :

Մարդոյ ՚ի բարին կամ ՚ի չարն ըրած ամեն շարժմանց, հակամիտութեանց և փոփոխութեանց կեդրոնը սիրտն է : Հետեւաբար մարդ մի բարոյական կամ արդար ընելու համար պէտք է նորա սրտին մէջ արմատացած մոլութեանց և չար սովորութեանց փոշին ու տատանող բարոյական դատախ

արտիւթեան չնորհիւ արմատաքի իլը լել, և ոչ թէ զայն ամուսնաւորել, եւ թէ ամուսնացած չէ, և կարծել թէ այսու բարոյական կը լինի մարդ :

Բարոյական կամ ըստ եւս է ասել Աւետարանի հիման վերայ հաստատուած դատախարակութիւնն է միայն, որ մեր ներքին մարդը, մեր սրտի ըզգացումը, մեր կամաց շարժումները և մեր մտաց խորհուրդները դէպ ՚ի բարին կ'ուղղէ, մեր ներքին վայրենութիւնն ու ստորին կիրքերն կը զսպէ ու կ'անհետէ և մարդկային ընկերակալ նութեան մէջ, ընդհանուր բարեկրթութեան, վարուց ազնուութեան և բարեկեցութեան փրկարար տարերքն ու սղջունքը կը մուծանէ և կը ծաւալէ : Այն դատախարակութիւնն որ մարդոյ սրտէն չըսկիր և իւր անկիւնաքարը նորա մէջ չը հաստատուէր, անգործ մարդկային վտրքն ու բարքն ուղղելու, նորա ապականեալ կեանքը սրբելու և զայն բարոյական մարդ կաղմելու : Մարդին բարոյական յարաբերութեամբ սրտի դատախարակութեանն արտաքոյ բնաւ այլ միջոց չը կայ, և չը պիտի լինի յաւիտեան : Մտքի կրթութիւնը բոլոր տառաքին վարժութիւններն ու ձեւակերպութիւնները, նոյն իսկ բազաքակրթութիւնը, իրենց բովանդակ զորութեամբ անգործ են մարդկային բնութիւնը իւր վայրենացեալ վիճակէն հեռացնել և նորա սրտին խորը սրժացեալ անասնական կիրքերն հետաջինջ առնել. վստն զի սրտէն արտաքոյ եղած կրթութիւններն ու վարժութիւնները կը շպարեն միայն զմարդ և զայն բռեալ գերեզմանաց կը նմանցնեն, որք յարտաքուստ գեղեցիկ կ'երեւին, բայց ՚ի ներքուստ լի են մեռելոց ու կերտոններով և ամենայն պղծութեամբ ու գարշութեամբ :

Բարոյական դատախարակութեան ա

ուաթին և վերջին առարկան մարդոյ սիր-
արն ու խիղճն է, նորա անմահ հոգին է:
Բարոյական դատախոսական է, որ մեր
թմրած ու մեռած խիղճը կրթութիւն, կը
կենդանացնէ և յարսուտ արթնութեան
ու հսկման մէջ կը պահպանէ: Այս է, որ
մեր ներքին մարդը իւր ամեն պրծու-
թիւններէն կը սրբէ, զայն առաքինութեանց
ասպարէզ կը յորինէ և տաճար
սրբութեան: Այս է, որ մեր սրտին խռ-
րը աստուածահաճոյ դրացումներ կը
զարթուցանէ, և բարեպաշտական ջեր-
մեռանդութեանց մշտափառ ջահն կը
լուցանէ: Այլ երջապէս նա է, որ մեր
հոգին ճշմարտութիւններով կը սնու-
ցանէ, զայն կը վերածնէ և մեր ներ-
քին ու արտաքին մարդն միմեանց հետ
ներդաշնակութեան թելերով կը միա-
ցընէ:

Ահա այս ամեն խորհրդածութիւն-
ներէն ակներեւ և մերկապարանոց կ'ե-
րեւի որ մարդոյ բարոյականութիւնն
կամ անբարոյականութիւնն նորա սր-
տին և սրտէն ծնած գործոց մէջ միայն
խուզարկել պէտք է և ոչ թէ նորա ա-
մուսնութեան կամ ամուրիութեան
մէջ:

Եւ այս ամենէ միթէ անբնական և
միանգամայն սխալ դրութիւն մի չէ՞
մտանաւորէն ընդհանուրն հետեւցնե-
լու դրութիւնը, և միթէ չարաչար չեմք
սխալիր, երբ մի ամուսնացեալ մարդոյ
լաւութենէն կամ յոռութենէն ընդ-
հանուր ամուսնացելոց լաւութիւնն
կամ յոռութիւնն հետեւցնեմք: Ըստ
որում անհնարին է մի մարդոյ կոյր
կամ կաղ կամ ստախոս կամ արբեցող
և կամ մարդաստան լինելէն՝ բովան-
դակ մարդկութեան կոյր կամ կաղ
կամ ստախոս կամ արբեցող և կամ
մարդաստան լինելն եղբակացնել: Հե-
տեւաբար անտեղութիւն եւ միան-
գամայն տխմարութիւն է նոյնպէս մի

կուսակրօն մարդոյ բարոյականութե-
նէն կամ անբարոյականութենէն՝ ընդ-
հանուր կուսակրօնութեան բարոյա-
կանութիւնն կամ անբարոյականութե-
թիւնն հետեւցնել, չլսին դատողու-
թեամբ բրիտանական կրօնի ազատու-
թեան պարսաւաղիր լինել, գահա-
վէժ խորհրդով բարոյականութեան ա-
ռանձնաշնորհութիւնն միմիայն ամուս-
նացելոց վերադրել և շնական փիլիսո-
փայութեամբ ամուրիութիւնը առաջի
Լսարանոց բնութեան գէմ ապաստեցնու-
հան: Դիտար Դիտար-Դիտն համարիլ: Իսկ
եթէ ենթադրեն որ ուխտադրութեան
կան կուսակրօնաց մէջ, միթէ բւերա-
պատիկ աւելի չը կան նաեւ ամուս-
նացելոց մէջ: Այնք ուխտադրութիւն
նէն կ'ատեմք հաւասարապէս, սակայն
Դիտար Դիտար-Դիտն վերայ է և ոչ անյանց:

Ազգաց պատմութիւններն ու
տարեգրութիւնները մատնանիշ ցոյց
կը տան մեզ, որ զանազան դարուց
մէջ եղած են եւ կան մարդիկ, ու-
րոնք մի անհատի կամ ոմանց դէմ ա-
նարգ ատելութեամբ եւ թշնամու-
թեամբ վառուած ու բորբոքած, եւ
վրէժխնդրութեան դատապարտելի կը-
րիւք վարակուած, իրենց պժգալի կը-
րից յազուրդ տալու նպատակաւ բազ-
միցս կամեցած են մեծամեծ սկզբունք-
ներ եղծել, բարոյական և աշխարհա-
չէն օրէնքներ ջլատել, կամաւ ճշմար-
տութիւններ խեղաթիւրել, յանուն
ազատութեան՝ ազատութիւնն ջնջել,
գերութեան հեղձուցիչ վարմերու մէջ
ամրափակել զմարդ և ստրկութեան
քստմնելի թագաւորութիւնն վերա-
կանգնել: Նանուն հայրենասիրութեան՝
հայրենիքն մատնել, և ազգ մի ողջոյն
վարատականի հայրենեաց, օտար աստ-
ղերու և կլիմաներու ներքեւ ցիրու-
ցան տիրել, յանուն լուսաւորութեան՝
խոր սպիտութեան կենազրու փաթու-

Թանայ մէջ պարտականել զայն և յանուն բարոյականութեան՝ անբարոյականութեան լարելովն թող զահալիվել :

Այլ և եւ և կան արդարեւ այսպիսի անձինք , որոնք անխղճաբար շէն ու բազմամարդ աշխարհներ տխուր անապատներու փոխարկած են , թաւաւորութիւններ կործանած , մեծաւ մեծ յիշատակարաններ տապալած , բայց երբէք , բնաւ երբէք չեն կարողացած կրենց նպատակակիտին ժամանել , իրենց ստիկն ու կրկն են թաւան բարոյապէս սպաննել , այլ ընդհակառակը զայն աւելի եւս բարձրացուցած են և այսու իրենց անտոնթ ճակտին վերայ վիճակնաբութեան սեւ կնիքը անջնջ գրոշմած :

Կանցնին մարդիկ , կը հողովն տաւրներ ու գարեր , որոնք իրենց անխնայութիւնը աշխարհս կերպարանափոխ կրնեն , երկիրներ կը յեղափոխեն , ազգեր մուսուլմանութեան ու անյայտութեան գաղտնի մէջ կը թաղեն , նորանոր ազգեր կը յարուցանեն , զարմանապանջ հըրաշակերտներ կը ջնջեն ու կ'անհետեն . բայց անօրինին և սովորաբար ճակտին վերայ գրոշմուած այդ նոգիւղի կնիքը անկարող են սրբել :

Կանք մեր խտրին :

Հատ և շատ կը յուսիմք , որ Օրագիրն եւս իւր 775 թուոյն մէջ Բարոյականութեան խնդիրն պարխարսարան մակադրով հրատարակած թիւր ու մոլոր դատաւութիւններով ընդդէմ զինած էքրիստոնէական բարոյականութեան ազատ սկզբունքին :

Օրագիր Ս . Պատրիարքին դէմ ունեցած անհաշտ ատելութեան կրիւք վարակուած վատահամբաւել կ'ուզէ զայն . սակայն ինչով պէտք էր վառարանաւելահան հոսէր խնդրոյն դժուարութիւնը : Բազմոյց անգամ Կորին Սրբաշնութեան դէմ գրգռելու ելաւ

ժողովուրդը , շատ յարձակումներ րբաւ , սակայն երբէք իւր նպատակին չը հաւատաւ : Աստի երբ տեսաւ , որ իւր այս ամեն փորձերն ապարդիւն եղան , յուսահատ նորա պաշտօնին և կոչման գէմ զննեցաւ , սոյն է կուսակրօնութեան . և զայն առաջի Վարձոյ բնութեան Գեմ պարսպաբէլա հանդիսապէս ռախարքութեան համարեց և կուսակրօնի ժը արտար լինել բնութեան օրինաց հակառակ :

Օրագիրն ահա սոյնպիսի անհեթեթ և դահապէժ վճիռներով անիրաւութեան և ռախարքութեան կը համարի կուսակրօնութիւնը և անիրաւ ռախարքութիւն կուսակրօնը և Գաղաթը լինելու անպարտաւ : Արով ըստ տարօրինակ տրամաբանութեան Օրագիրն ռախարքութեան անիրաւութեան անյարգութեան անխնայութեան եւս մեր Հայոցս ետկու կաթողիկոսներն և երկու սրաւրիարքները , որոնք սուսնձին առանձին աթոռներ կը գրաւեն և իրենց հովանաւորութեան ներքեւ կ'ամփոփեն բովանդակ հայ ժողովուրդը , ռախարքութեան անիրաւ և Գաղաթութեան անյարգութեան են նմանապէս եպիսկոպոսներն ու վարդապետներն , որոց անընդմիջաւ կան խնամոց յանձնուած են ընդարձակ վիճակներ , և լայնածաւալ թեմեր :

Բայց չենք գիտեր թէ՛ ինչ տրամաբանութեամբ կամ ո՞ր օրէնքով Օրագիրն դատաւորութիւնը ամուսնացելոյ միայն կը սեպհականէ և բոլոր կուսակրօններն իբրեւ արդարութեան անձեռնհաս և անիրաւ կը դատաւարանէ : Աւր կարգացած կամ բոստ է երբէք այսպիսի մի պըսնդակ կանոն կամ պայման արդարութեան և իրաւանց ի դատաստանի . արդեօք Վատարանին մէջ , յորմէ անգէտ է խսրաւ . արդեօք ազգաց օրինաբարութեանց կամ աւանդութեանց մէջ : Աւր է յուսած ապացոյցը : Թուի թէ Օրագիրն իւր ոգորմելի խելքն իբրեւ օրէնք կ'ուզէ հըս

չակել : Արշակ անմուծ թիւն :

Տեա, ուշիմ ընթերցող, թէ () րաբի՛ր՝ Պատրիարքի դէմ՝ ունեցած անհաշտ ատելութեան կրքէն մղեալ մինչեւ ուր կը հասնի : Ս. պատրիարքի կենաց և գործոց մէջ չը կարողանալով այնպիսի յանցանք մի գտնել, որով կարող լինի զայն վատահամբաւել և բարոյապէս սպանանել, քրիստոնէական կրօնի սոյն դարաւոր սովորութիւնն իմաստակաւ թեամբ կը նախատէ, կ'այսպնէ կուտակրօնութիւնն ընդունող ազգերն, ընդ որս և Հայոց ազգը, նախատակած կ'առնէ, տգիտաբար կրօնական յեղափոխութիւն պէտք է կ'աղաղակէ, դատապարտելի շատեսութեամբ կուտակրօնութիւնը յառաջադիմութեան արգելիչ և մարդ մշակութեան թէմ պարտաւոր կը համարի, քապալել պէտք է զայն կը գոչէ զայրագին մոլեգնութեամբ. և այս ամենը որպէս թէ անցեալէն քաղած՝ կը յորդորէ ժողովուրդը, որ անցեալէն խրատուի :

Սակայն, սիրելի ընթերցող, մի զարմանար երբէք () րաբի՛ր սոյն տղայական տգիտութեան վերայ. վասն զի մի գիտէ, թերեւս կարդացած չէ մեր ազգային և եկեղեցական սրտամութիւն ներս. ըստ որում եթէ գէթ միանգամ աչքէ անցուցած լինէր, անշուշտ եմ որ սոյն թիւր ու մոլար դատողութեանց դատուն մէջ չը պիտի գլորէր երբէք յանմուտաց նախատինս իւր. այլ նոցա մէջ պիտի տեսնէր այնպիսի կուտակրօն վարդապետներ, սրտնք 'ի սէր Աստուծոյ, 'ի սէր կրօնի, 'ի սէր աղբի և հայրենեաց անձնադիր շահատակութեամբ ընդ քրտն և ընդ աբիւն ապաժոյժ կ'ընթանան, դպրոցներ կը բանան, հայ աշխարհն համայն կը յեղափոխեն, անձանձրոյթ աշխատելով միտքերն ու սիրտերը բարոյական դատարարակութեամբ կը մշակեն և Աւետարանի փրկարար լուսով կ'աչե-

ւարեն, կը կաղգուրեն և կը զօրացնեն :

Ահա այսպիսիները, որոց շնորհիւ միայն կարող եմք ազգ կոչուիլ, ամենքն ևս կուտակրօն էին. բայց ոչ երբէք ըստ () րաբի՛ր արտազուր սղոմաբաւ նութեան ուխտադրութ, և ոչ իսկ յառաջադիմութեան արգելիչ և մարդ մշակութեան թէմ պարտաւոր, այլ ընդհակառակը, լուսամիտ, ժողովրդասէր, հայրենասէր, յառաջադիմասէր, անձնանուէր և սրբանուէր անձինք էին : Ահա այսպէս կ'ուսուցանէ մեզ անցելոյն սրտմուծ թիւնը և կը խրատէ զմեզ, որ առանց ծաղրելի սովեստութեան, մեր նախնեաց նման քրտինք թափենք, ուշտառ թինք ազգովին և յօգուտ ապագային հայրենասէր կրօնաւորներ ստորառ տենք :

Եթէ անցեալ մի ունիմք, այդ ևս մեր սրտմուծ թիւնն է, գէթ մենք այս պէս կ'ըմբռնեմք և մեր խիական հաւմուծն այս է. բացց անձանթ է մեզ () րաբի՛ր յիշած անցեալը : Ար անցեալն է արեւօք այդ, որ () րաբի՛ր կը խրատէ ինքնախօնութիւնն քապալել և կրօնական յեղափոխութեան կարեւորութիւնն նշմարել. թող բարեհաճի մեզ մատնանիշ առնել որպէս զի 'ի հայելու յ տեսնենք իւր խելատատակի գոյնը :

Արդ խօսքերնիս ձեզ կ'ուղղենք, () րաբի՛ր, և կը հարցնեմք, թէ ինչու այսպէս անդուշաբար ձեր կոչման հակառակ զրից մէջ կը գտնուիք. և ձեր առ Հայ հասարակութիւնն ու առջիկա Աստուծոյ հանդիսապէս և սրբաշնորհաբար ուխտող խաղառ կը մոռանաք : Ոչ ասրբէն բազմիցս ուխտադիր եղաք ազգն լուսաւորել, նորա բարոյական ունիւթական օգուտներն պաշտպանել, նորա սիրտն ու միտքը մշակել բարոյական յորդորներով և յօգուտ նորա աշխատիլ բանիւ և գրով : Այլ թէ մերթ և կեղեցւոյ խորհուրդները

կրից խաղաղէք ընելը, մերթ ամուսնութեան սուրբ կապը ծաղրելը (1), մերթ կուսակրօնութիւնը բնութեան դէմ սպառնալու թիւն համարիլը, մերթ աշխնդակ խորհրդածութիւններով քրքրիտ նշական կրօնի դարաւոր սովորութիւններն թշնամանելը և մերթ քրիստոնէական կրօնը յիմարաբար յեղախախտելու ելնելը, միթէ այս ամենը յօգուտ ազգին աշխատիլ է ըստ քո ծակ տրամաբանութեան:

Յանուն արդարութեան և ճշմարտութեան կ'երդուեցնեմք զբեզ, () Դու գի՛ր, որ անկողմնակալ ու բոլոր ձեռքդ խրդ՝ ճիշդ վրայ դրած՝ ըսես մեզ, թէ այս անհեթեթ հրատարակութիւններդ՝ տգիտութեան և կոյր ատելութեան վիթմունք չեն: Սենք չենք հաւատարբը նաւ, որ քո հրատարակածներդ՝ քո համոզմունքդ են. իսկ եթէ համոզմունքդ են, ախա՛ն, հազար ախա՛ն, որ ի լուսաւոր դարուս տգիտութիւնը իբրեւ համոզմունք ծախողներ կան սոսկաւին մեր ազգին մէջ:

Ս. Ս. Յակոբեան:

(1) Օգտօք իւր մի թուոյն մէջ (զոր այժմ չեմք յիշեր, բայց ի պահանջէ հարկին կարեմք գտնել և ցոյց տալ) սաստիկ կը դանդաւորեցնէր զէմ, թէ՛ ինչու ամուսնութեան կապը անլուծանելի կը քարոզէ, և կը յորդորէր, որ այս սուրբ սկզբունքը մերժուի և ամուսնութեան նոր օրէնք հաստատուի Հայոց մէջ:

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՊԱՇՏՕՆԷԻՑ ՈՒՂՂՈՒԱՅ

(Հարաւնակութիւն, տես թիւ 8.)

Տեսէք, Հարբ իմ, տեսէք որ մեր այժմեան անպատիւ վիճակը արդէն ծանուցուած է մեզ, և մեր զայն չը գիտնալը տգիտութիւն է, գիտնալ և չզգուշանալը անհնազանդութիւն, յամառութիւն և յիմարութիւն է: Եթէ մենք Մտուծոյ խօսքին չենք հնազանդիր, ինչպէս կը յուսանք որ ժողովուրդը մեզ հնազանդի:

Սուրբ գրոց վճիռները, բարոյական կանոնները և խրատներն անփոփոխ են, ամեն ժամանակի համար կարեւոր են, ամեն ատեն նոյն են. մարդկան չարեաց համար նորա պարունակած սպառնալիքները, խոտտացուած պատիժները միշտ կատարուած են և կը կատարուին: Սուրբ գիրքը ամեն դարու համար է, և նա է մեր իմաստութիւնը. մենք զայն չի գիտնալով և չկարդալով, նորա պարունակած աստուածային պատուէրներն ու հրամանները չը կատարելով, միթէ նորա սպառնալից ազդեցութենէն ազանտ պիտի լինիմք. ո՛չ երբէք, այլ միշտ կը կրենք, կը գանք, բայց կամ չգիտենք և կամ չենք ուզեր գիտնալ թէ մեր յանցանաց հետեւութիւնն է այն: Եւ ըրը աչք չունեննալուն համար արեգակը չի ծագած չը լինիր, այլ միշտ կը ծագի և կոյրն ալ նորա ազդեցութիւնը կրկրէ. մեք ևս մոռք կոյր լինելնուս համար, Մտուծոյ խօսքին ազդեցութիւնը չենք կարող խափանել. քանզի այն յաւիտենական օրէնք է: Սենք միշտ մեր անմիտ գործոց դառն հետեւանքը կը